ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՌՈՇՅԱՆԻ Պ. ՂԵՎՈՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

գ. Պռոշյան, Խանջյան 2, Հեռ. (+374 224) 6 42 70, էլ. փոստ proshyan@schools.am

№400 01.12.2023թ

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանգիրը ամբողջությամբ միակողմանի լուծելու մասին

«Ֆոտոն» ՍՊԸ -ի

Տնօրեն Ն.Պետրոսյանին

Հարգելի՝ պարոն Ն.Պետրոսյան

«Պռոշյանի Պ.Ղևոնդյանի անվ. միջն.դպրոց» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Ֆոտոն» ՍՊԸ-ի միջև (այսուհետ՝ Մատակարար) 21.08.2023թ.-ին կնքվել է թիվ ՀՀԿՈՏ-ՊՌՈՇՅԱՆ-ՄԴ-ԳՀԱՊՁԲ-2023/02-2 պայմանագիրը, որի համաձայն մատակարարը պետք է ապրանք մատակարարեր մինչև 25.12.2023թ:

Սույն թվականի նոյեմբերի 24-ին ձեզ ուղարկել ենք պատվերի ցուցակ, նոյեմբերի 27-ին՝ հարցում պատվերի առաքման մասին: Սակայն առ 01.12.2023 թ. ոչ մի պատասխան չենք ստացել:

Հիմք ընդունելով, որ Մատակարարը խախտել է պայմանագրով ստանձնած պարտավորությունները և ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի հավելված 1-ի 33-րդ մասի 4-րդ և 17-րդ կետերի դրույթներով՝ «Պռոշյանի Պ.Ղևոնդյանի անվ. միջն.դպրոց» ՊՈԱԿ -ը միակողմանի լուծում է «Ֆոտոն» ՍՊԸ -ի հետ 2023 թ.-ի օգոստոսի 21-ին կնքված թիվ ՀՀԿՈՏ-ՊՌՈՇՅԱՆ-ՄԴ-ԳՀԱՊՁԲ-2023/02-2 պայմանագիրը:

Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման ժամկետը խախտելու համար Մատակարարին տրվում է 10 աշխատանքային օր որակավորման և պայմանագրի ապահովումները համապատասխանաբար 25736 (քսանհինգ հազար յոթ հարյուր երեսունվեց) ՀՀ դրամի և

17157(տասնյոթ հազար հարյուր հիսունյոթ) ՀՀ դրամի չափով վճարում կատարելու համար: Փոխանցումը պետք է կատարել Գնորդի բանկային հաշվին /ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն 900118000208/:

Սահմանված ժամկետում փոխանցումը չկատարելու դեպքում պարտավորվում ենք որոշում կայացնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6/ա-րդ կետի համաձայն «Ֆոտոն» ՍՊԸ-ի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

ՀՀ Կոտայքի մարզի «Պռոշյանի Պ.Ղևոնդյանի անվ. միջն.դպրոց» ՊՈԱԿ-ի

տնօրեն՝ Մ.Ավետիսյան